ԿԱՐԾԻՔ

Լուսինե Աշոտի Ենգոյանի «Գոյականի ձևաբանական զուգաձևությունները հին հայերենում» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Լեզվի ձևաբանական զուգաձևությունների ուսումնասիրությունը, անշուշտ, կարևորվում է ինչպես համաժամանակյա, այնպես էլ տարժամանակյա լեզվական իրողությունների գիտական նկարագրությունն ամբողջացնելու առումով: Այս տեսանկյունից առանձնակի կարևորություն ունի ոսկեդարյան գրականության ներկայացուցիչների երկերի և թարգմանական մատյանների լեզվառճական առանձնահատկությունների ուսումնասիրությունը:

Գոյականի ձևաբանական, մասնավորապես հոլովական զուգաձևությունների ուսումնասիրությունը, դրանց օրինաչափությունների բացահայտումը կարևորվում է գրաբարի՝ ոչ միայն գրական լեզվի իրողությունների ներկայացման տեսանկյունից, այլև նրա՝ որպես խոսակցական լեզվի գնահատման առումով, և այդ կարգի ուսումնասիրությունները, կարծում ենք, կարող են որոշակի լույս սփռել նաև հինգերորդ դարի բարբառային նկարագրի որոշարկման հարցին:

Այս տեսանկյունից կարևոր աշխատանք է կատարել Լուսինե Ենգոյանը՝ ուսումնասիրության նյութ դարձնելով Աստվածաշունչ մատյանի, Մովսես Խորենացու, Ագաթանգեղոսի, Եզնիկի Կողբացու, Ղազար Փարպեցու, Եղիշեի և Կորյունի երկերում առկա ձևաբանական զուգաձևությունները՝ մասնավորապես գոյականի թվակազմության և հոլովակազմության հարացույցներում:

Աշխատանքի սկզբում ատենախոսը մանրամասնորեն ներկայացնում է հարցի պատմությանը վերաբերող ուսումնասիրությունները, դրանցից քաղված դիտարկումները՝ ցույց տալով գրաբարի տարբեր ենթաշրջաններում դրսևորված զուգաձևություններն ինչպես գոյականների, այնպես էլ դերանունների համակարգերում: Հպանցիկ անդրադարձել է նաև միջին հայերենի և աշխարհաբարի ձևաբանական զուգաձևությունների վերաբերյալ տեսակետներին:

Ամփոփելով իր դիտարկումները՝ ատենապետը եզրակացնում է, որ դրանք հատկապես վերաբերում են գոյականական, թվականական, դերանվանական և բայական համակարգերի ձևաբանական տարբերակներին:

Աշխատանքում ուշադրություն է հատկացվել նաև թվականական և դերանվանական համակարգերի զուգահեռ ձևերին, որոնք մասնավորապես դրսևորվել են նրանց հոլովման հարացույցներում: Ցույց է տրված, թե ո՛ր քերականը ինչ չափով է անդրադարձել դրանց քննությանը:

Այնուհետև ատենապետը բավականին հանգամանորեն ներկայացրել է հին հայերենի ձևաբանական-գոյականական նորմի հասկացությունը՝ զուգահեռ ներկայացնելով դրա տարբերակային դրսևորումները, դրանք պայմանավորելով ինչպես գրական լեզվի մշակվածության հանգամանքով, այնպես էլ տարածքների լեզվի ազդեցությամբ:

Բնութագրելով **զուգաձևություն** հասկացությունը՝ իրավացիորեն գրում է, որ այն սերտորեն առնչվում է լեզվական նորմի ըմբռնմանը, որ յուրաքանչյուր զարգացած լեզու նորմավորված է, իսկ տարբերակայնությունը և զուգաձևությունը բնորոշ են նորմավորված գրական լեզուներին (էջ 32): Ցույց է տվել ձևաբանական նորմի փոփոխությունների և ձևաբանական զուգաձևությունների, գոյականի հոլովական զուգաձևությունների կառուցատիպերը 5-րդ դարի հայերենում՝ դրանք բաժանելով ըստ հոլովման տիպերի՝ միաժամանակ նշելով, թե ո՛ր տարբերակը ո՛ր հեղինակի երկում ինչ հաճախականությամբ է գործածվել (այս հատվածում ատենապետը քննել է միայն սեռականի ձևերը): Իսկ մինչ այդ անդրադարձել է հայ լեզվաբանության մեջ **զուգաձևություն** եզրույթի գործածության անմիօրինակ ըմբռնմանը: Ըստ հեղինակի՝ երևույթը բնութագրվում է նաև **տարբերակայնություն, զուգադրություն, եռաձևություն, բազմաձևություն** եզրույթներով(էջ 34):

Այնուհետև քննության նյութ է դարձրել հին հայերենի գոյականի հոլովման տարբերակային զուգաձևությունները՝ դրանք ներկայացնելով ըստ առանձին հոլովների և հոլովումների, որոնց աղբյուրներն արձանագրված չեն:

Գոյականի թվակազմության զուգաձևությունները քննելիս դիտարկել է նաև հավաքական գոյականները, որոշ գոյականների դեպքում ցույց է տվել դրանց

գործառական տարբերակները, որոնցով էլ պայմանավորված է քերականական մասնիկների ընտրությունը:

Անշուշտ, ատենախոսի կողմից կատարված է գնահատելի աշխատանք, և կարելի է ասել, որ նա ընդհանուր առմամբ լուծել է իր առջև դրված խնդիրները, որոնց արդյունքներն ամփոփ կերպով շարադրված են «Եզրակացություններ» բաժնում:

Սակայն աշխատանքը զերծ չէ նաև որոշ թերացումներից, որոնց վերաբերյալ ունենք հետևյալ դիտարկումները.

1. Ատենախոսը գրում է, որ **աւր** գոյականը տրական հոլովում **աւուր** հոլովաձևին զուգահեռ ունի նաև երկրորդական **օրին** ձևը, սակայն չի նշում՝ ո՛ր հեղինակի երկում է այն հանդես գալիս: Եվ արդյո՞ք հինգերորդ դարի հեղինակներն են գործածել: Կամ՝ այր բառի եզակի սեռական-տրական հոլովներում **առն** բառաձևին զուգահեռ ներկայացնում է նաև **արան** ձևը՝ դարձյալ չնշելով աղբյուրը (էջ 79):

   Կարծում ենք՝ աշխատանքը կշահեր, եթե զուգաձևություններից յուրաքանչյուրի կոնկրետ աղբյուրը նշվեր, և բնագրային համապատասխան օրինակով ցույց տրվեր, թե նշված ժամանակաշրջանի ո՛ր հեղինակը ո՛ր տարբերակին է նախապատվություն տվել:

2. Աշխատանքի տարբեր հատվածներում որպես զուգաձևություններ ներկայացված են այնպիսի բառազույգեր, որոնք դժվար է զուգաձևություն համարել, օրինակ՝ **երկաքանչիւր-իւրաքանչիւր** («հնչյունական զուգաձևություններ», էջ 6): Հատոզիչ չէ նաև **քոյր** գոյականի սեռական // տրական **քեռ, քերց** առաջնային ձևերի կողքին երկրորդային **քոյր // քօր // քուեր, քեռց // քուերց** կիրառությունները որպես ուսումնասիրվող ժամանակաշրջանում գործածական ձևեր ներկայացնելը, մանավանդ որ աղբյուրները չեն նշվում (տե՛ս էջ 79):
3. Աշխատանքի կարևոր մաս է կազմում «Հավելվածը», որտեղ ներկայացված է հին հայերենում ձևաբանական զուգաձևություններ դրսևորող բառերի ցանկը: Աշխատանքի նշանակությունն ավելի մեծ կլիներ, եթե բառերից

յուրաքանչյուրի դիմաց նշվեր գործածության հաճախականությունն ուսումնասիրված երկերում:

Անշուշտ, նշված թերությունները որակ չեն կազմում և ավելի շատ առաջարկություններ են, քան դիտողություններ՝ ելնելով ատենախոսի՝ իր առջև դրված խնդիրներից և նպատակներից: Սույն աշխատանքը և նրանում քննված լեզվական նյութը կարող են համեմատության եզրեր դառնալ համատիպ իրողության տարժամանակյա քննության համար ինչպես հին հայերենի ենթափուլերի միջև, այնպես էլ լեզվի տարբեր գոյավիճակների միջև:

Ուսումնասիրությունը լույս է տեսել իբրև առանձին մենագրություն: Ատենախոսության թեմայով հրատարակված հոդվածները և սեղմագիրը լիովին արտացոլում են ատենախոսության հիմնական բովանդակությունը:

Ելնելով վերոշարադրյալից՝ կարելի է եզրակացնել, որ Լուսինե Աշոտի Ենգոյանի «Գոյականի ձևաբանական զուգաձևությունները հին հայերենում» թեմայով ատենախոսությունը բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի՝ թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջները, համապատասխանում է Ժ.02.01 թվանիշին («Հայոց լեզու» մասնագիտությամբ), և նրա հեղինակին կարելի է շնորհել բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, որին նա լիովին արժանի է:

Պաշտոնական ընդդիմախոս՝

բան. գիտ. թեկն., դոցենտ (Վ.Ա.Ներսիսյան)

Հաստատում եմ

Վ. Ներսիսյանի ստորագրությունը

Խ. Արովյանի անվան ՀՊՄՀ գիտքարտուղար՝ (Մ. Բալիրյան)

15.06.2022.